

sacrum codicem, siquidem pagina ei una temporis vetustate deerrat, omnibus numeris absolutum reddidit. Regnante serenissimo Hetru-riæ duce Francisco Mediceo».

427-28 թերթերուն վրայ երկու վեր-ջնական ծանոթութիւններ կան. առաջինը կ'ըսէ թէ գործը վերջացաւ ի փաստ Գրիս-տոսի 6 նոյ. 1353, և ի թուին Հայոց 802. երկրորդը կ'ըսէ թէ գրուեցաւ Գրիգ. արքեպիսկոպոսէն՝ Իննովկենտիոս Զ. Պա-պին ժամանակ Բիզայի մէջ, և թարգմա-նուեցաւ եղ. Պոնտիոսէ ի Կարգէ Կրտսեր եղբարց՝ որ շատ հմուտ էր հայ լեզուին և գրականութեան:

Օրացոյցը (Diurnum) լատինէ հայերէն թարգմանեց ի գործածութիւն Գար. Եղ-բարց. սկիզբը կայ տօնացոյցը, Տեղե-կութիւն չկայ թարգմանողին և օրինակո-ղին վրայ: Այս ալ ըմբայ է եղ. Մատա-թիայի. ԺԴ կամ ԺԵ դարու գրչագիր մ'է, թղթեայ 279 թերթերով, — ԺԴ դարու ձեռագիր՝ ուրիշ Օրացոյց մը կը պահուի Բաւոյ Համալսարանին Արք-Գրատան մէջ. Թ. 346. Կաֆայէն եկած կը թուի. վրան մի քանի տեղեկութիւն-ներ տուինք արդէն վերը՝ Կաֆայի թա-ղէոս Բ.ի վրայ խօսելով:

Սյադմասրանին սկիզբը կայ եղ. Օգոստ. Բաջենցի ուղեորութիւնը՝ որ 1-49 թեր-թերը կը գրաւէ: Գրչագրիս մասին խօսե-ցանք վերը եղ. Օգոստինոսի վրայ խօսած ատեններս:

Ամիսփեց Հ. Գ. ՈՍԿԵԱՆ

Մոնացոյեան կը հաղորդուի որ վախձաներ է 78 տարեկան հասակին մէջ Ուիլեմ Գոնրատ Ֆոն Ռեմեյկին՝ ռազմ. ծառայոյ-նէրուն հռչակաւոր հեղինակը: (Եճ. 1845 ի Լէնուրթի. գիտը կատարեց 1895ին):

— 52 —

ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ՁԵՌԱԳԻՐԲ

Ս. ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՔԻՆ

(Շար. տես Բազմ. էջ 7)

Գագիկ Թագաւորին անունը կրող այս Բժշկարանը հազիւ աւարտած՝ անմիջա-պէս կը սկսի Մխիթար Հերացիի Ջերմանց Միխրարութիւնը կիսատ, որ Ժ.րդ Կուրաէն կը սկսի ու կը վերջանայ Լ.րդ Գլուխով և կը գրաւէ ձեռագրին 143րդ — 229րդ էջերը:

Հարկ չեմ համարիր առանձինն խօսիլ այս գործին վրայ, որու մասին մէկէ աւելի անգամներ հրատարակած եմ ուսումնա-սիրութիւններս. այլ կը բաւականանամ միայն ըսելով, թէ այս կիսատ գրութիւնը՝ թերեւս օր մը ծառայէ ճշտելու Մխիթար Հերացիի արդէն լոյս տեսած «Ջերմանց Միխրարութիւն»ին մէջը գտնուած կարգ մը սխալները:

Լ.րդ Գլուխին վախճանը դրուած է Հ. Ղ. Ալիշանի Սխառանքին մէջ Լուսանկա-րուած Յիշատակարաններուն երկրորդը՝ որ է.

«Որ բարձր գրաս հոգաց և մարմնոց
«հաստացելոց քոց Գրիստոս Աստուած
«բժշկեալ գնացոյ և զմարմնոյ հիստերոսին
«ժառաքի քոյ Հերմայ տեսան Կոսթիսոյ՝
«ստոցողի բժշկարանիս՝ և պահեալ գրաւ
«խորովքն ումենքումք՝ աւփութք, կրկին
«կենդանութեամբք, կենդանովն և անկեղա-
«նեսան՝ զերկաքանդիւրան ըստ քումք հա-
«ձոյից կատարելով, զի մնալով Եփեսոս
«յաշարնեայ նախապետէն աշրնեամասանց
«բոռն՝ անփոփոխելի ունելով իւրայօրն ըստ
«արքամոս ի փաստ քո ընդ հար և սուրբ
«հոգւոյն աշրնեայ յաշտեան»:

*

Ձեռագրին 230րդ էջին վրայ կը սկսի անոր երրորդ բաժինը, որ 81 գլուխներու բաժնուած աշխատութիւն մ'է՝ բաւական ընդարձակ և կարեւոր:

Յայտնի չէ թէ որո՞ւ գործ է այս, բայց շատ հաւանական է ընդունել՝ որ անկասկած Միխիթար Հերացի բժշկապետին մէկ ուրիշ աշխատութիւնն է այս, վասն զի ինչպէս կ'աւանդուի՝ Շնորհալի Ներսէս Հայրապետին մտերիմ, և կլիկեան աշխարհի գրականութեան արծաթի դարուն փառքերէն եղող այս մեծիմաստ բժիշկը՝ բաց ի Զերմանց Միխիթարութիւնէն զբաժնէր նաև ուրիշ երկեր, գործ կը յիշատակեն Ամիրտուվաթ, Ասար և ուրիշ բժիշկներ։

Այս աշխատութիւնը՝ գոր հետագայ դարերու մըր բժշկաբաններուն մայր կարելի է համարել՝ ունի սկիզբը նախ իւր պարունակած նիւթերուն լիակատար մէկ ցուցակը, և կ'արժէ՝ որ ամբողջովին ներկայացնեմ զայն, կերպով մը ուրիշ բժշկաբաններու բաղդատութիւնը դիւրացնելու համար։

Ահաւասիկ այն.

Ա. Վասն ամենայն ցեղ գլխացաւորեան որ չիւնի ի կիսան մարդկան։ — Բ. Վասն շոշկակի, որ գլխոյն կիսն ցաւի։ — Գ. Վասն որ խելքն անցնի և եռապի, և ալիցն մտքն անցնի. — Դ. Վասն որ մաղաւտկար չիւնի մարդ։ — Ե. Վասն Մանուխայի, որ հանդիպի մարդոյ։ — Զ. Վասն ամենայն ցեղ Ալացաւորեան։ — Է. Վասն ամենայն ցեղ Ատամնացաւորեան։ — Ը. Վասն որ ի բերանն խաղվարտ ելնէ կամ ցեղ ընկնի որ է գէշ ցաւն, կամ հոտ գաւ։ — Թ. Վասն որ լեզուն բոշոխայ մարդոյ՝ յինչ իրոց որ լինի։ — Ժ. Վասն ամենայն ցեղ Փողացաւորեան։ — ԺԱ. Վասն ամենայն ցեղ Ականջացաւորեան։ — ԺԲ. Վասն ամենայն ցեղ Կրծացաւորեան։ — ԺԳ. Վասն ամենայն ցեղ Շաշալի։ — ԺԴ. Վասն ամենայն ցեղ Նդալի և Հազի։ — ԺԵ. Վասն ամենայն ցեղ Ստամբուցաւորեան։ — ԺԶ. Վասն ամենայն ցեղ Սրտացաւորեան։ —

ԺԷ. Վասն ամենայն ցեղ Լերդացաւորեան։ — ԺԸ. Վասն ամենայն ցեղ Թոքացաւորեան։ — ԺԹ. Վասն ամենայն ցեղ Փայծաւորեան։ — Ի. Վասն ամենայն ցեղ Իրիկամնացաւորեան։ — ԻԱ. Վասն Գոնճակացաւոր, Մամացի և Գուրի։ — ԻԲ. Վասն ամենայն ցեղ փորացաւորեան և եղաց։ — ԻԳ. Վասն որ կերակուրն ողջ և անձալ ի վայր անցանի և երգաց։ — ԻԴ. Վասն ամենացեղ Պատրոցոյն։ — ԻԵ. Վասն Կոյնչի, և ամենայն ցեղ հոսկույնոյ՝ որ է հոտ զեղ։ — ԻԶ. Վասն ամենայն ցեղ սեղան՝ և որոյ հոտո տեղն ցաւի։ — ԻԷ. Վասն Բրսեմի և սրսեմի։ — ԻԸ. Վասն Սքրաթ՝ Որ հիւանդն փաղաղի և ոչինչ իմանայ։ — ԻԹ. Վասն Խափակունի՝ Որ յանկարծակի ուժն գնայ։ — Լ. Վասն Արախունի՝ Որ հանդիպի մարդոյ։ — ԼԱ. Վասն որ մարդոյն կողմն գնա, որ է քեշ։ — ԼԲ. Վասն Սընկայի՝ Որ դիպի մարդոյ՝ Որ է զմաստն։ — ԼԳ. Վասն որ երեսոց զոյնն աշիրի և սպիտկուցն զեղնէ և ամենայն անձնէ։ — ԼԴ. Վասն որ մարդոյ Ործկայ գա, և զինչ ոտն ի վեր բերէ։ — ԼԵ. Վասն որ մարդ քրտնած չար խմէ և ահոկ իր։ — ԼԶ. Վասն Վերաբերեան՝ որ զմաղաւտ սրբէ։ — ԼԷ. Վասն որ զմաղձն կուպէ և զհեծկաւոյն դաղրեցնէ։ — ԼԸ. Վասն որ չընրն քաշվին՝ և որ ի զարկուց կամ յայլ պատճառէ կարճն չիւն։ — ԼԹ. Վասն Նըկրիսի որ դիպի մարդոյ՝ և որոյ ոտն ցաւի։ — Խ. Վասն որ Կղանա մարդ՝ Որոյ անդամացաւորին դիպի։ — ԽԱ. Վասն Օրի՝ որ լինի ի փոր և յոջն և քամո ի ստամոքն և կամ քամակն ցաւի։ — ԽԲ. Վասն որ ի ցաւն եռալի՝ և զոգի չկարէ տալ և առնու։ — ԽԳ. Վասն աղբւն եռալեան՝ քէ հանդիպի Հիւանդին։ — ԽԴ. Վասն որ կղակն բաթի Մարդոյն։ — ԽԵ. Վասն որ ընդ յերանն և ընդ քիւնն ալիւն

գաւ և չ'արցնելիւ — ԽԶ. վասն որ զուսմնու
 երևալն արքէ: — ԽԷ. վասն որ երակն
 ուռնեայ մարդոյ: — ԽԸ. վասն որ գլխոյն
 և մտաւիսն մագն ի վայր գայ: — ԽԹ. վասն
 ի գլխին մագ թուցնելի և զնաւ
 բեփկի գլխոյն՝ և թէ հերն ձօղի: — Ծ. վասն
 որ ձուրն ուռնաւ մարդոյն: — ԾԱ. վասն
 ամենայն ցեղ Հատվծի, որ լինի ի
 մարդ: — ԾԲ. վասն Սարմակարի թէ
 հանդիպի Մարդոյ: — ԾԳ. վասն որ զայր-
 կան բնութիւն զօրացնէ՝ և յորմէ որդէնեւ-
 թիւն չլինի: — ԾԴ. վասն Ճիճոյ բարբի
 և տափակի, որ առ մարդ լինի: — ԺԵ. վասն
 որոյ անձն և տաւմարսն հովանաւ: — ԾԶ. վասն
 ամենայն ցեղ սպեղանաց՝
 կտրածի՝ խոզից՝ քամո՝ կոնքի և որ ետտ
 տեղն շրջի: — ԾԷ. վասն ամենայն ցեղ
 զարկոց՝ բրի՝ ըրումբի՝ նետի և վասն ա-
 մենայն ցեղ խոցերոյ: — ԾԸ. վասն որ
 զարոյնն դադարեցուցանէ զամենայն ցեղ
 զարկոց: — ԾԹ. վասն որ զմարդ Դեղուն
 նետով հարուն: — Կ. վասն որ ի կրակէ
 սլոյրի մարդ՝ յոր և լինի տեղի: — ԿԱ. վասն
 ամենայն ցեղ ելլեղնոյ և խոցերոյ: — ԿԲ. վասն
 քածպարի որ լինի ի գլխին՝
 և վասն կոծի: — ԿԳ. վասն որ ձնքն
 պարթէ, և վասն որ ըրեզուրքն կուտ լինի: — ԿԴ. վասն
 ամենայն ցեղ բորի և բոյ-
 րի: — ԿԵ. վասն Մարաբորի որ է Մա-
 րասուն: — ԿԶ. վասն Գանացաւի: — ԿԷ. վասն
 որ ի մատն աշտոյց ընգնի՝ թէ ձնքն
 դողա կամ գլուխն: — ԿԸ. վասն կնոջ որ
 ծիծէլ ցաւի՝ և երբ կտրն չ'ունենայ: — ԿԹ. վասն
 Սրովայնացաւի կանանց: — Հ. վասն
 տեսաւտն կանանց և որ ի կարգի ո՛չ լինին: — ՀԱ. վասն
 կնոջ՝ որ որովայնն քափի՝
 և որոյ մանկանց մայրն չարծի: — ՀԲ. վասն
 կնոջ՝ որ չըղանաւ, և զամուսն ծնեղա-
 կան անելի: — ՀԳ. վասն որ շոյտ տա
 ծնանել՝ և զմեկնայ մանուկ յորովայնէ ելաւ:

նելի: — ՀԴ. վասն Տղաի սնեղեան և վասն
 ամենայն ցառոց որ դիպի տղայի: — ՀԵ. վասն
 րանակի՝ որ է պիսակն: — ՀԶ. վասն
 մարդոյ որ ուխտաւորի: — ՀԷ. վասն
 որ կտտղած շուն խածանէ և կամ ալ զա-
 րան: — ՀԸ. վասն մարդախոտ հանելոյ: — ՀԹ. վասն
 փեկուտն հանելոյ: — Զ. վասն Սարտաղան
 դեղոյ: — ԶԱ. վասն փորցավորեան որ լինի ի
 մարդ: — ԶԲ. վասն ելլեղի որ ելնէ ի
 մարդ առ կենա և ոտովի: — ԶԳ. վասն
 պեղծ ելլետի: — ԶԴ. վասն Գողարգելի: — ԶԵ. վասն
 որ ի մարդէ և յարեւն հիւանդանաւ
 հաղաւմալն: — ԶԶ. վասն
 եղանաց առաջ շարաց եփերոյ: — ԶԷ. վասն
 վարցաւուն: — ԶԸ. վասն
 հերքոյնի: — ԶԹ. վասն մաղասակարի: — Դ.
 վասն եղայի: — ԴԱ. վասն
 եռասխայի սլոյց դեղերոյ:

Ինչպէս սոյն ցուցակէն կ'երեւի՝ Հնդիւ-
 նակը մեր մարմինն բոլոր գործարաննե-
 ռուն գրեթէ ամբողջ ախտաբանութիւնը կը
 գրէ. բայց ախտերու նկարագրութենէն
 աւելի՝ հիւանդութիւններու դարմաններն
 է որ մանրամասն և բազմադիմ կը պատմէ
 այս գործին մէջ:

Արագ ակնարկով մը կը տեսնենք որ
 նախ Գլխի հիւանդութիւններէն կը սկսի
 Գլխացաւութեան տեսակներէն կը ճառէ
 երկարօրէն և կը յանձնարարէ առանձինն
 զեղեր, որոնց զլիաւորն է՝ արիւն առնելը
 ծոծրակէն, և նաև տեսակ տեսակ բոյսերու
 ըմպելիներ:

Կը խօսի կարգաւ կիսադիւստրաի (շու-
 կակ), ուշաթափութեան, մաղասակարի՝
 որ է լեղդի բորբոքումը, և վերամաղա-
 րեան (մանախուշաւ) վրայ, և կ'անցնի՝
 աչքի, առաջինբու, բերնի վէրքերու (խաղ-
 վարտ կամ խաղաւարտ), լեզուաթուշու-
 թեան, փողի, ականջի ցաւերը թուելու:

Գլուխէն կ'իջնայ կուրծք և կը յիշէ
 Շաւաան՝ այսինքն բոքարարը (pneumonia) և բոքափառարարը (pleurésie), զորս

իրար հետ կը խառնէ, և նաև հարբուխն ու հազը:

Ստամոքսի, լերդի, թոքերու, և փայծաղի և երկկաթնեբու հիւանդութիւններուն առանձին գլուխներ կը նուիրէ և մասնաւորապէս ալ միզային անցքերու՝ գանձակացատի, կամ միզազարաւի, մամացի, քարի և փորի տեսակ տեսակ ցաւերու:

Ասոնցմէ յետոյ կը յիշէ՝ սուռկ (Hémorrhoides), կոյկեշ կամ խոյկեշ, որ է՝ միշացաւը (Lumbago), բրսէմ և սրսէմ (այսինքն դողերեքոց ջերմը), սքթա (ուշաթափութիւն), խափական (անուժութիւն) և արախան (ուշակորուսութիւն), ֆէլճ (կիւսալուծութիւն) հիւանդութիւններն ու անոնց բազմադիմի դեղերն ու դարմանները:

Հետզհետէ հետեւելով ցանկին՝ կը տեսնենք թէ այսօրուայ ու բժշկարանութեան իբրև արտանիշ ընդունած խել մը ցաւագին վիճակներ՝ ախտի տեղ առնուած են ձեռագրին մէջ և առանձին գլուխներով որաւուած, որպէս՝ ործալ, քրտնիլ, վերաբեւութիւն (փսխում) առնել, հեծկտալ:

Գլխի, երեսի և մարմնի մորթային հիւանդութիւններն ալ չի մոռնար, և քանի մը գլուխ ալ կը նուիրէ ծննդաբերութեան, դժուարածնութեան, անծնութեան կամ ամուսնեան դարմանումին և նաև երախաներու սնունդին:

Վէրքերու տեսակները, կանացի հիւանդութիւնները, յոգեբու հիւանդութիւններն ալ կը դարմանէ առանձին պրակներով և կը յիշէ Պիտակը (ծաղիկ) և վարդաբու (հարսանիք?), որոնք՝ գիտենք թէ հին ատեններն ալ վաղաժամեթ էին:

Զեռագրիս համար աւելի բոտումն մասանց չեմ ուզեր ընել, ինչ որ շատ կրնայ երկարել մեր գրութիւնը, ոչ ալ թուել մի առ մի անոր յանձնարարած բուսադեղերը, որոնց վրայ կերտած է ողբացեալ Հ. Ալիշան իւր հոյակապ ՀԱՅԳՈՒՍԱԿը:

*

Հայ բժշկական գրուածներու անդրաւնիկ և նախընծայ նմոշներն են Ս. Դաւարու ձեռագրին այս պարունակածները:

ասոնցմէ ընդօրինակութիւններ կան Երուսաղէմի և Վիեննայի վանքերուն մէջ ալ, բայց ներկայս անոնց լիակատար ու աւելի հին օրինակն է:

Յոյժ ցաւալի է որ Զեռագրիս ընդօրինակութիւնն է, և շատ գէշ ու սխալ կերպով կատարուած ընդօրինակութիւն մը. բայց ներելի է այս, նկատի ունենալով՝ թէ գրիչը ՎԱՐԻ ՄԻՏԻՇՃԻՆ իր անունին քով կը գրէ «ՄԵՐՈՒՆԻ» ածականը:

Ասի չ'արգիլեր մեզ սակայն երախտաւարտ զգացումներով մեծայարգ ընծայելու յիշատակը այդ պատկառելի ՄԵՐՈՒՆԻՆ, որու անխնջ յարատեւութեանը պիտի պարտիքը միշտ Հայ բժշկական պատմութեան թրեւն թաքուն մնացած խիստ կարեւոր մէկ էջը:

Մինչև այն օրը որ յայտնուի իսկական նախօրինակը այս ձեռագրին՝ առ այժմ՝ վարդ Մարիշցիի գրիչն է որ մեզ կ'ուսուցանէ, թէ 10-11րդ դարու մէջ Արաբերէնէ Հայ բժշկական գործ մը թարգմանուած է, և թէ՛ ունինք հաւ Միսթար Հերացիի Ախտադարմանաբանութեան կարեւոր մէկ երկը, զոր ցարդ անունովը միայն լսած էինք:

Վարդ Մարիշցիի ընդօրինակած այս երրորդ գործը՝ որ դրուած է կից Զերմանց Միսթարութեան՝ չի կրնար ո'չ ռեք պատկանիլ՝ բայց եթէ անմահանուն Հեւրացի բժշկապետին:

Բժշկարանս կ'աւարտի հատորին 395րդ էջին վրայ և հոն կը կարդանք դարձեալ Սիւտանին մէջ լուսանկարուած Յիշատակաբաններուն Երրորդը, զոր Վարդ Մարիշցիի ծերունի գրիչը հատիկ հատիկ գիրերով կ'արձանագրէ, իրեւ վերջին կնիք ընդօրինակութեան:

Հինգ տողէ կը բաղկանայ այդ Յիշատակարանը, և է.

« Զուտապոյ թշկարաւիս զվեծ սև աստիօս
« և քաղաքագն և քարեհամառ զայրե
« զՊր. Հերոս տէր Կոսթիօսյոյ և զիւրս
« ամենայն կնիքաւիս և զանգոյցնայս յի-
« շեսչիք ողորմութեանս Աստուծոյ արածա-
« նանայ, և որպէս յիշէրդ՝ և ձեզ շնորհաւ:

« ցի: Գրեցա՛ս ի թոս. Զեֆ, ի թագր՝ «հերմո՛»
« և ի հայր՝ գրիգորի »:

Որչափ փափաքելի է որ Հայ Մեկե-
նաս մը ծնէր յանկարծ և կուժթէմպերկի
անմահ ձեռքերուն յանձնէր այս թանկ-
արժէք բժշկարանը, որը՝ կը կրկնեմ,
հետագայ դարերու Հայ բժշկարաններու
մայր ու առաջնորդ եղած է. և այսօր
10—11րդ և 13րդ դարերու Հայ բժշկա-
կան պատմութեան խօսուն անդրին է:

(Շարունակելի)

ՏՕՏԹ. ՎԱՐԱՐ Յ. ԹՈՐՈՍՅԱՆ

Վեներտիկ — Ս. Ղազար
12 Գիկտեմբեր 1922

ՀԱՆՈՒՍԱՍՏԱՆ

Կ Ո Ւ Ս Ա Ս Տ Ա Ն Ք

ՀԱՏԱՍՏԱՆԻ ՄԷՋ

□ ○ □

(Շար. տես թագմ. 1923 էջ 12)

4. — Ե դարէն յետոյ այլ ևս չենք գրտ-
ներ՝ աւելի քան չորս հարիւր տարի՝ կու-
սանոցաց հետքը Հայաստանի մէջ: Արա-
բական տիրապետութեան ներքև անկարելի
էր արդէն կուսաստաններ պահել՝ առանց
ենթարկելու զանոնք հեթանոսաց յար-
ձակման վտանգին: Ուստի կրնանք ապա-
հով լինել՝ թէ չկային անոնք մինչև Բա-
գրատունեաց թագաւորութեան երևումը:
Զայս կը հաստատէ և այն պարագայն՝
որ երբեմն կը հանդիպինք հաւատաւորաց,
որ վանքէ դուրս կը բնակին:

Այսպէս կայ Աղուանից իշխանադստեր՝
Շահանդխտոյ դէպքը, է դարէն, որ մինչ
դեռ հայ իշխանի մը հարսնութեան կ'եր-
թար, Տաթևոյ մօտերը յարձակում կը կրէ
պարսիկ զորանակալներէ. և անոնց չմատ-
նուելու համար՝ Աստուծոյ կ'ապաւինի, և
ձիով հանդերձ կը նետուի ձորի մը մէջ՝

Շահեր կոչուած, ուր հրաշիւք անփաս կը
մնայ, Տեմեկելով վայրը բնակութեան յար-
մար, ի նշան շնորհակալութեան առ Աս-
տուած՝ կը հրաժարի աժուանութեան գա-
ղափարէն, և « նուիրեցի զանձն իմ Գրիգ-
որոսի, կը գրէ ինքն իսկ, և ուխտեցի այլ
ոչ ելանել աստի մինչև ցվախճանն իմ »:
Հոն կը շինէ « մատոռս մի և խցիկ մի », և
ինք զինքը կը յանձնէ Սիւնեաց եպիս-
կոպոսին առաջնորդութեան, Օրորդն ա-
ւելի բան մը չի յաւելուր, մինչդեռ Սիւ-
նեաց պատմիչը կ'ուզէ՝ որ « այլ ևս կու-
սանս » հաւաքած լինի իւր քով, և երեսուն
տարի հոն բնակած մինչև մահը՝, Բայց
մեք իրաւունք ունինք կասկածելու իւր
ճշմարանին ի վանս փոխարկման, որ
շիշուած լինելու էր անոր կտակին մէջ:

Ուրիշ օրինակ մ'է աւանդութիւնը Ստե-
փանոս Սիւնեցոյ քրոջ՝ Սահակդխտոյ,
ապրած Ը դարուն, որ « ի մանկութենէ
ստացեալ զվարս կուսութեան », կը բնակի
Գառնոյ ձորակին մէջ « յայրի միջոյ »: Եթէ
կուսանոցներ լինէին, անշուշտ անոնց մէջ
պիտի բնակէր: Բայց իւր միակեցութեան
մէջ ալ կը պահէ վանական կարգերը, և
մասնաւորապէս փակարանի դրուիչներ և
Որովհետեւ լաւ երաժշտագէտ մ'է, գրող
և ուսուցիչ հոգեւոր երգոց, կը դասախօսէ
« ի ներքոյ վարագուրի նստեալ »², որպէս
զի չտեսնուի միւս սեռի աշակերտներէն:

Ուշագրաւ է և այն՝ որ մինչդեռ Գու-
նայ Բ ժողովը 527ին³ և Պարստաւայ Բ-ը
768ին⁴ կանոններ կը սահմանեն վանա-
կանաց համար, կուսանաց մասին չեն
խօսիր բնաւ, որովհետեւ կուսանոցներ
չկային, ինչպէս ստիպուած ենք հետե-
ցնելու:

5. — Բագրատունեաց հաւատոց ու
սուրին պաշտպանութեան ներքև վերստին
կը սկսին նշմարուիլ կուսանոցաց՝ շատ
ցանցառարար՝ և կամ հաւատաւորաց հետ-
քերը հայ հողին վրայ: Ստեփանոս Աստ-

1. Ստ. Օրբել. Մաս. 1861, էջ 119—21. — 2.
Նոյն. 101. — 3. Կանոն 19-է. — 4. Կանոն 46.